ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

03.03.2021թ.

ՈՐՈՇՈՒՄ 89-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՐՈՏԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով, հիմք ընդունել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Սյունիքի մարզայինփրկարարական վարչության պետի 2021 թվականի փետրվարի 2-ի գրությունը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի Որոտան բնակավայրում 2021թ. մարտի 25-ին անցկացնել շտաբային ուսումնավարժություն «Բնակչության տարահանման և հրդեհաշիջման աշխատանքների կազմակերպումը խոշոր անտառային հրդեհների դեպքում>> թեմայով:
2.Գորիս համայնքի ղեկավարի օգնական Ռադիկ Բակունցին նշանակել ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ ու շտաբը համալրել համապատասխան ծառայությունների պետերով՝ պատրաստ վիճակի պահելով համայնքի ուժերը և միջոցները:
3.Շտաբը համալրել համապատասխան կազմավորումների հրամանատարներով, պատրաստ վիճակի պահել համայնքի ուժերը և միջոցները.
4.Ուսումնավարժությունում ընդգրկել՝ Գորիս համայնքապետարանի ղեկավար կազմին, Որոտան գյուղի վարչական ղեկավարին, կազմավորումների հրամանատարներին.
5.Հաստատել ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանը և ապահովել պլանով նշված միջոցառումների սակմանված ժամկետում կատարումը:

ԱՌՈՒՇ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

2021/03/03
Ք.Գորիս